

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության հավատարմագրման ազգային համակարգի գործունեության կանոնները և կանոնակարգում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի, Հայաստանի Հանրապետության հավատարմագրման ազգային մարմնի և հավատարմագրված կամ հավատարմագրմանը հավակնող համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող ֆիզիկական ու իրավաբանական անձանց (այսուհետ՝ համապատասխանության գնահատման մարմիններ) հարաբերությունները:

2. Սույն օրենքը կարգավորում է փորձարկում, կալիբրավորում, տեխնիկական հսկողություն, սերտիֆիկացում և համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող համապատասխանության գնահատման այլ մարմինների հավատարմագրման գործընթացը՝ անկախ հավատարմագրման և համապատասխանության գնահատման պարտադիր կամ կամավոր հիմքերից:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

հավատարմագրում՝ երրորդ կողմի միջոցով համապատասխանության հավաստում, որը վերաբերում է համապատասխանության գնահատման մարմնին և պաշտոնապես ապացուցում է համապատասխանության գնահատման որոշակի խնդիրներ լուծելու նրա իրավասությունը,

հավատարմագրման ազգային մարմին՝ Հայաստանի Հանրապետությունում համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրում իրականացնող մարմին,

հավատարմագրման վկայագիր՝ պաշտոնական փաստաթուղթ կամ փաստաթղթերի փաթեթ, որը հավաստում է հավատարմագրումը որոշակի ոլորտում,

հավատարմագրման ոլորտ՝ պաշտոնական փաստաթուղթ, որը սահմանում է համապատասխանության գնահատման գործունեության շրջանակը և հանդիսանում է հավատարմագրման վկայագրի անբաժանելի մասը,

հավատարմագրման նշան՝ հավատարմագրման ազգային մարմնի կողմից համապատասխանության գնահատման մարմնին տրված նշան՝ հավատարմագրված կարգավիճակը ցուցադրելու նպատակով օգտագործելու համար,

բողոքարկում՝ համապատասխանության գնահատման մարմնի հավատարմագրման ազգային մարմնի կողմից հավատարմագրման վերաբերյալ կայացրած որևէ անբարենպաստ որոշման վերանայման պահանջ: Որոշումները ներառում են՝ դիմումի ընդունման մերժումը, գնահատում իրականացնելու մերժումը, ուղղիչ գործողություններ իրականացնելու պահանջը, հավատարմագրման ոլորտի փոփոխությունների կատարումը, հավատարմագրումը մերժելու, կասեցնելու կամ դադարեցնելու մասին որոշումների ընդունումը, ինչպես նաև այլ գործողություն, որը խոչընդոտում է հավատարմագրմանը:

համապատասխանության գնահատում՝ արտադրանքին, գործընթացին, համակարգին, անձին կամ մարմնին ներկայացվող սահմանված պահանջների կատարման ապացույց՝ փորձարկման, սերտիֆիկացման, տեխնիկական հսկողության, համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման իրականացման միջոցով,

համապատասխանության գնահատման մարմին՝ համապատասխանության գնահատման ծառայություններ մատուցող մարմին, որը կարող է հանդիսանալ հավատարմագրման օբյեկտ,

հավատարմագրման ընդլայնում՝ հավատարմագրման ոլորտի ընդլայնման գործընթաց,

շահագրգիռ կողմեր` հավատարմագրմամբ ուղղակիորեն կամ անուղղակի շահագրգիռ կողմեր: Ուղղակիորեն շահագրգիռ են համարվում նրանք, ովքեր հավատարմագրվում են, անուղղակի շահագրգիռ են համարվում նրանք, ովքեր օգտվում են հավատարմագրված համապատասխանության գնահատման ծառայություններից կամ հիմնվում են դրանց վրա,

հավատարմագրման կրճատում` հավատարմագրման ոլորտի որոշակի մասի դադարեցման գործընթաց,

հավատարմագրման կասեցում` հավատարմագրման ոլորտի ժամանակավորապես լրիվ կամ մասանակի անվավեր ճանաչման գործընթաց,

հավատարմագրման դադարեցում` հավատարմագրումն ամբողջությամբ դադարեցնելու գործընթաց,

փորձարկում` ընթացակարգի համաձայն համապատասխանության գնահատման օբյեկտի մեկ կամ մի քանի բնութագրերի որոշում,

կալիբրավորում` գործողություն, որը հատուկ պայմաններում, առաջին հերթին, հիմնում է կապ էտալոնների միջոցով ստացված չափման անորոշություններով մեծության արժեքների և չափման անորոշություններով մեծության արժեքների և չափման անորոշություններով համապատասխան ցուցմունքների միջև, երկրորդ հերթին, օգտագործում է այս տեղեկատվությունը ցուցմունքից չափման արդյունք ստանալու նպատակով կամ հիմնելու համար,

տեխնիկական հսկողություն` հատուկ պահանջների կամ մասնագիտական դատողության հիման վրա արտադրանքի նախագծման, արտադրանքի պատրաստման գործընթացի կամ տեղադրման փորձաքննություն, որը որոշում է դրա համապատասխանությունը ընդհանուր պահանջներին,

սերտիֆիկացում` արտադրանքի, գործընթացի, համակարգի կամ անձի համապատասխանության հավաստում երրորդ կողմի միջոցով,

գնահատող` ֆիզիկական անձ, նշանակված հավատարմագրման ազգային մարմնի կողմից` միայնակ կամ գնահատողների խմբի կազմում` համապատասխանության գնահատման մարմնի գնահատում իրականացնելու համար,

փորձագետ՝ որոշակի գիտելիքներ ունեցող ֆիզիկական անձ՝ նշանակված հավատարմագրման ազգային մարմնի կողմից, գնահատման ենթակա հավատարմագրման ոլորտում փորձաքննություն իրականացնելու համար,

պարբերական գնահատում՝ գործունեության տեսակների լրակազմ, բացառությամբ կրկնական գնահատման, հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմնի կողմից հավատարմագրման պահանջների շարունակական կատարումը հսկելու համար:

Հոդված 3. Հավատարմագրման բնագավառում հարաբերությունների իրավական կարգավորումը

1. Հայաստանի Հանրապետության հավատարմագրման բնագավառում հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, այլ իրավական ակտերով և միջազգային պայմանագրերով:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա գործում են միջազգային պայմանագրերի նորմերը:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 4. Հավատարմագրման նպատակը

1. Պաշտոնապես հավաստել համապատասխանության գնահատման մարմնի՝ համապատասխանության գնահատման որոշակի տեսակի ծառայություններ մատուցելու իրավասությունը:

2. Նպաստել Հայաստանի Հանրապետությունում համապատասխանության գնահատման մարմինների կարողությունների և ծառայությունների

կատարելագործմանը, բարձրացնել սպառողների վստահությունը համապատասխանության գնահատման գործունեության արդյունքների նկատմամբ:

3. Ապահովել համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրումը՝ համապատասխանեցնելով ընթացակարգերի ներդաշնակումը միջազգային հավատարմագրման համակարգերի ընթացակարգերին՝ բացառելով առևտրում տեխնիկական խոչընդոտները:

4. Ստեղծել պայմաններ Հավատարմագրման ազգային մարմնի և նրա կողմից հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների գործունեության արդյունքների միջազգային ճանաչման համար:

Հոդված 5. Հավատարմագրման հիմնական սկզբունքները

1. Հավատարմագրումը ծառայություն է, որը ներկայացնում է հանրային շահերը:

2. Հավատարմագրումը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա՝

1) օրինականություն,

2) կամավորություն, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ պահանջ չի սահմանվում,

3) շահագրգիռ բոլոր կողմերի համար հավասար իրավունքներ,

4) անկախություն,

5) անկողմնակալություն,

6) թափանցիկություն,

7) արհեստավարժություն,

8) հավատարմագրման գործընթացում ձեռք բերված տեղեկատվության գաղտնիություն,

9) միջազգային և տարածաշրջանային ստանդարտներին ներդաշնակեցված հավատարմագրման պահանջների կիրառում:

ԳԼՈՒԽ 3

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 6. Հավատարմագրման ազգային համակարգի կառուցվածքը

1. Հավատարմագրման ազգային համակարգը կազմված է միմյանց հետ համագործակցող հետևյալ մասնակիցներից՝

- 1) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմին,
- 2) հավատարմագրման ազգային խորհուրդ,
- 3) հավատարմագրման ազգային մարմին,
- 4) հավատարմագրման գործընթացում ներգրավված ֆիզիկական անձինք,
- 5) հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմիններ:

Հոդված 7. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը՝

- 1) մշակում է հավատարմագրման և համապատասխանության գնահատման բնագավառի պետական քաղաքականությունը,
- 2) ապահովում է Հավատարմագրման ազգային մարմնի պետական բյուջեից համապատասխան ֆինանսավորում,
- 3) խրախուսում է հավատարմագրումը պարտադիր համապատասխանության գնահատման ոլորտներում,
- 4) իրականացնում է հավատարմագրման ազգային մարմնի գործունեության մոնիտորինգ, որի իրականացումը չպետք է իրավունք տա պետական լիազոր մարմնին միջամտելու, չեղյալ հայտարարելու կամ պահանջելու չեղյալ հայտարարել հավատարմագրման վերաբերյալ Հավատարմագրման ազգային մարմնի կամ Բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշումները,

- 5) սահմանում է հավատարմագրման նշանի պատկերը, դրան ներկայացվող տեխնիկական պահանջները և կիրառման կարգը,
- 6) իրականացնում է վարչական վարույթ հավատարմագրման բնագավառում,
- 7) Հաստատում է հավատարմագրման վկայագրերի, հավատարմագրման ոլորտների և համապատասխանության սերտիֆիկատների ձևերը,
- 8) սահմանում է օտարերկրյա համապատասխանության գնահատման մարմինների գործունեության արդյունքների ճանաչման կարգը:

Հոդված 8. Հավատարմագրման ազգային խորհուրդ

1. Հավատարմագրման ազգային խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) խորհրդատվական գործառույթներ ունեցող մարմին է:
2. Խորհրդի անհատական կազմը և գործունեության կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
3. Խորհուրդը բաղկացած է 11 անդամներից և ընդգրկում է գիտական, գործարար, արտադրող, հասարակական կազմակերպությունների ու համապատասխանության գնահատման մարմինների ներկայացուցիչներ: Խորհրդի աշխատանքներն իրականացվում է հասարակական հիմունքներով:
4. Խորհրդի գործառույթներն են՝
 - 1) Հավատարմագրման ազգային ռազմավարության և քաղաքականության մշակման ու զարգացման խթանում,
 - 2) Հավատարմագրման ազգային մարմնին հավատարմագրման բնագավառի քաղաքականության իրականացման հարցերով խորհրդատվության տրամադրում,
 - 3) փորձագետների ցանկի կազմավորման և հավատարմագրման գործընթացում օտարերկրյա գնահատողների և փորձագետների ներգրավման հարցում առաջարկությունների ներկայացում,
 - 4) Խորհրդին կից բողոքարկման հանձնաժողովի ստեղծում,
 - 5) Հավատարմագրման ազգային մարմնի գործունեության տարեկան հաշվետվության քննարկում,

6) օտարերկրյա համապատասխանության գնահատման մարմինների գործունեության արդյունքների ճանաչման համաձայնության տրամադրում,

7) հավատարմագրման բնագավառում միջազգային համագործակցության համաձայնության տրամադրում:

Հոդված 9. Հավատարմագրման ազգային մարմին

1. Հավատարմագրման ազգային մարմինը ստեղծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ միջազգային պահանջներին համապատասխան:

2. Հավատարմագրման ազգային մարմնի անվանումն է “Հավատարմագրման ազգային մարմին”՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն, որը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է:

3. Հավատարմագրման ազգային մարմինը Հայաստանի Հանրապետությունում համապատասխանության գնահատման մարմիններին հավատարմագրման ծառայություններ մատուցող միակ մարմինն է:

4. Հավատարմագրման ազգային մարմինը՝

1) հավատարմագրում է համապատասխանության գնահատման մարմիններին և իրականացնում է հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների պարբերական գնահատում,

2) վարում է հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների և հավատարմագրման գործընթացում ընդգրկված գնահատողների գրանցամատյանները,

3) կազմակերպում է հավատարմագրման գործընթացում ներգրավված աշխատակիցների, գնահատողների և փորձագետների վերապատրաստման դասընթացներ, ինչպես նաև հավատարմագրման վերաբերյալ գիտաժողովներ և սեմինարներ,

4) հրապարակում և տրամադրում է տեղեկատվություն հավատարմագրմանն առնչվող խնդիրների վերաբերյալ,

5) հավատարմագրման բնագավառում տարածաշրջանային և միջազգային համագործակցության շրջանակներում ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը և մասնակցում է հավատարմագրման տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների աշխատանքներին:

5. Հավատարմագրման ազգային մարմինը կազմակերպում է համապատասխանության սերտիֆիկատների բլանկների տպագրությունը, տրամադրում համապատասխանության գնահատման մարմիններին և հաշվառում:

6. Հավատարմագրման ազգային մարմինը իր իրավասության սահմաններում կնքում է համագործակցության և համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման երկկողմանի ու փոխադարձ ճանաչման համաձայնագրեր:

7. Հավատարմագրման ազգային մարմինը հավատարմագրման բնագավառում իրականացնում է նաև այլ գործառույթներ՝ սույն օրենքի և այլ իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության, տարածաշրջանային և միջազգային փաստաթղթերին համապատասխան:

Հոդված 10. Հավատարմագրման գործընթացում ընդգրկված ֆիզիկական անձինք

1. Ֆիզիկական անձինք, որպես գնահատող և փորձագետ ընգրկվում են համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման գործընթացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ֆիզիկական անձինք, պետք է պահպանեն հավատարմագրման սկզբունքները, սույն օրենքի և հավատարմագրման բնագավառում կիրառվող իրավական ակտերի, կանոնների և ընթացակարգերի պահանջները և ստորագրեն անկողմնակալության և գաղտնիության հայտարարագիր:

Հոդված 11. Հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինները

1. Հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմիններն են՝

1) փորձարկման և ստուգաճշտման լաբորատորիաները,

2) արտադրանքի սերտիֆիկացման մարմինները,

3) կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինները,

4) ֆիզիկական անձանց սերտիֆիկացման մարմինները,

5) տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինները,

6) համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող համապատասխանության գնահատման այլ մարմիններ:

2. Համապատասխանության գնահատման յուրաքանչյուր մարմին Հավատարմագրման ազգային մարմնից կարող է ազատ կերպով տեղեկատվություն ստանալ հավատարմագրման գործընթացի վերաբերյալ, դիմել հավատարմագրման համար և հավատարմագրման գործընթացի արդյունքում հավատարմագրման պահանջներին համապատասխանելու դեպքում հավատարմագրվել:

ԳԼՈՒԽ 4

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑ

Հոդված 12. Հավատարմագրման գործընթացը

1. Հավատարմագրման ազգային մարմնի կողմից համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման գործընթացը իրականացվում է համաձայն միջազգային ԻՍՕ/ԻԷԿ 17011 ստանդարտի պահանջների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

Հոդված 13. Համապատասխանության գնահատման մարմինների իրավունքները

1. Հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինները՝

1) օգտագործում են Հավատարմագրման ազգային մարմնի հավատարմագրման նշանը,

2) դիմում են Հավատարմագրման ազգային մարմնին՝ ընդլայնելու կամ կրճատելու, ինչպես նաև կասեցնելու կամ դադարեցնելու հավատարմագրումը,

3) բողոքարկում են հավատարմագրման գործընթացը և հավատարմագրման մասին որոշումները:

Հոդված 14. Համապատասխանության գնահատման մարմինների պարտավորությունները

1. Հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինները պարտավոր են պատշաճ կերպով պահպանել հավատարմագրման կանոններն ու ընթացակարգերը և Հավատարմագրման ազգային մարմնի հետ կնքված պայմանագրով ամրագրված պարտավորությունները, ինչպես նաև վճարել հավատարմագրման հետ կապված մատուցվող ծառայությունների համար:

2. Հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինները պարտավոր են.

1) մշտապես համապատասխանել այն ստանդարտների, նորմատիվ փաստաթղթերի և իրավական ակտերի պահանջներին, որոնց համաձայն նրանք հավատարմագրվել են,

2) վկայակոչել հավատարմագրումը և կիրառել հավատարմագրման նշանը միայն հավատարմագրված գործունեության համար,

3) հավատարմագրման դադարեցման դեպքում Հավատարմագրման ազգային մարմնին վերադարձնել հավատարմագրման վկայագրի բնօրինակը,

4) համագործակցել Հավատարմագրման ազգային մարմնի հետ՝ ուսումնասիրելու իրենց կողմից հավատարմագրված համապատասխանության գնահատման գործունեության դեմ բողոքները:

Հոդված 15. Հավատարմագրման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում

1. Հավատարմագրման ազգային մարմինը տրամադրում է տեղեկատվություն շահագրգիռ բոլոր կողմերին հավատարմագրման գործընթացի վերաբերյալ:

2. Հավատարմագրման կանոններն ու ընթացակարգերը, ինչպես նաև հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների համար

նախատեսված գրանցամատյանները ենթակա են հրապարակման Հավատարմագրման ազգային մարմնի կողմից:

Հոդված 16. Հավատարմագրման նշանը

1. Հավատարմագրման նշանի պատկերը, դրան ներկայացվող տեխնիկական պահանջները և կիրառման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը:

2. Արգելվում է համապատասխանության գնահատման մարմինների կողմից հավատարմագրման նշանի կիրառումը չհավատարմագրված լինելու դեպքում:

ԳԼՈՒԽ 5

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հոդված 17. Հավատարմագրման ազգային մարմնի անդամակցությունը հավատարմագրման տարածաշրջանային և միջազգային կազմակերպություններին

1. Հավատարմագրման ազգային մարմինը կարող է անդամակցել, համագործակցել հավատարմագրման տարածաշրջանային և միջազգային կազմակերպություններին, մասնակցելու նրանց գործունեությանը և համաձայնագրերի շնորհիվ ձեռք բերել հավատարմագրման վկայագրերի ու համապատասխանության գնահատման արդյունքների ճանաչում:

2. Հավատարմագրման ազգային մարմինը, Խորհրդի համաձայնությամբ, կարող է դիմում ներկայացնել հավատարմագրման կազմակերպություններին անդամակցության կամ անդամակցության կարգավիճակի փոփոխության վերաբերյալ:

3. Հավատարմագրման ազգային մարմինը հավատարմագրման վկայագրերի ու համապատասխանության գնահատման արդյունքների ճանաչման համար Խորհրդի համաձայնությամբ, կարող է դիմել հավատարմագրման կազմակերպությունների բազմակողմ համաձայնագրերը ստորագրող կողմ դառնալու համար:

Հոդված 18. Երկկողմ համագործակցություն Հավատարմագրման ազգային մարմնի և օտարերկրյա հավատարմագրման մարմինների միջև

1. Հավատարմագրման ազգային մարմինը Խորհրդի համաձայնությամբ կարող է կնքել երկկողմ համաձայնագրեր հավատարմագրման օտարերկրյա մարմինների հետ:

2. Նման համաձայնագրերը կարող են ներառել Հավատարմագրման ազգային մարմնի և որևէ օտարերկրյա հավատարմագրման մարմնի հետ համատեղ համապատասխանության գնահատման մարմինների գնահատման և հավատարմագրման իրականացման մասին դրույթ:

Հոդված 19. Օտարերկրյա համապատասխանության գնահատման մարմինների գործունեության արդյունքների ձանաչումը Հայաստանի Հանրապետությունում

1. Հավատարմագրման ազգային մարմինը Խորհրդի համաձայնությամբ կարող է ձանաչել օտարերկրյա համապատասխանության գնահատման մարմինների գործունեության արդյունքները՝ լիազորված պետական կառավարման մարմնի կողմից սահմանված կարգի համաձայն:

2. Հավատարմագրման ազգային մարմնի կողմից չձանաչված համապատասխանության գնահատման մարմինների գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում արգելվում է:

Հոդված 20. Հավատարմագրման ազգային մարմնի կողմից հավատարմագրման ծառայությունների մատուցումը օտարերկրյա մարմիններին

Հավատարմագրման ազգային մարմինը կարող է հավատարմագրման ծառայություններ մատուցել օտարերկրյա համապատասխանության գնահատման մարմիններին:

Հոդված 21. Հավատարմագրման բնագավառում միջազգային համագործակցության մասին տեղեկատվության տրամադրում

1. Հավատարմագրման ազգային մարմինը տրամադրում է տեղեկատվություն երկկողմ, տարածաշրջանային և միջազգային համագործակցության, օտարերկրյա համապատասխանության գնահատման մարմինների գործունեության արդյունքների

ճանաչման, ինչպես նաև Հավատարմագրման ազգային մարմնի կողմից հավատարմագրված օտարերկրյա համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման վկայագրերի վերաբերյալ:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված տեղեկատվությունը ենթակա է հրապարակման Հավատարմագրման ազգային մարմնի կողմից:

ԳԼՈՒԽ 6

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 22. Հավատարմագրման ազգային մարմնի ֆինանսավորումը

1. Հավատարմագրման ազգային մարմնի ֆինանսավորման աղբյուրներն են.

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ստացված միջոցներ,

2) հավատարմագրման ծառայություններից ստացված միջոցներ,

3) հավատարմագրման վերաբերյալ հրատարակություններից, դասընթացների ու իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումներից ստացված միջոցներ,

4) միջազգային ծրագրերին, նախագծերին և համաձայնագրերին մասնակցության արդյունքում ստացված միջոցներ,

5) օրենքով չարգելված այլ միջոցներ:

2. Մինչև երեք հավատարմագրման տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների անդամակցության ծախսերը ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից:

ԳԼՈՒԽ 7

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հոդված 23. Պատասխանատվությունը սույն օրենքը խախտելու համար

1. Սույն օրենքի դրույթները խախտող ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև պետական կառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Սույն օրենքով սահմանված պահանջները չկատարելու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը իրականացնում է վարչական վարույթ՝ Հավատարմագրման ազգային մարմնի ներկայացմամբ:

ԳԼՈՒԽ 8

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 24. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հոդված 25. Եզրափակիչ դրույթներ

2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Հայաստանի Հանրապետության

Նախագահ

Ս.Սարգսյան

2011թ.

Երևան

ՀՕ- -Ն

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ»,
«ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ»,
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ
ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Անհրաժեշտությունը.

«Տեխնիկական կանոնակարգման մասին», «Չափումների միասնականության ապահովման մասին», «Ստանդարտացման մասին» և «Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նպատակը 2011 թվականի հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 111-Ն որոշման, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության եվ Եվրոպական միության միջև խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի բանակցությունների մեկնարկի նպատակով մինչև 2011 թվականի հունիս ամիսը կատարվելիք միջոցառումների ժամանակացույցի» 1-ին կետի կատարման ապահովումն է, համաձայն որի ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը հանձնարարված է սկսել ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 1693-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ որակի ենթակառուցվածքների բարեփոխման ռազմավարության և Գործողությունների ծրագրի իրականացումը, մասնավորապես՝ մշակել «Ստանդարտացման մասին», «Հավատարմագրման մասին», «Տեխնիկական կանոնակարգման մասին» և «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքները:

Սույն որոշման նախագիծը մշակվել է հիմք ընդունելով՝

- «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

Ներկայումս գործող՝ ոլորտը կանոնակարգող «Ստանդարտացման մասին», «Չափումների միասնականության ապահովման մասին» և «Համապատասխանության

զնահատման մասին» ՀՀ օրենքները չեն նպաստում համակարգերում առկա խնդիրների լիարժեք լուծմանը, ուստի համակարգերը կանոնակարգող օրենքները արդիկանացման կարիք ունեն` նպատակաուղղված.

տնտեսվարող սուբյեկտների վարչական բեռի կրճատմանը, որը պայմանավորվում է տեխնիկական կանոնակարգերով, հնացած ստանդարտներով, պարտադիր սերտիֆիկացման պահանջներով և որոնց գոյությունը չի հիմնավորվում Առևտրի համաշխարհային կազմակերպության ԱՏԽ համաձայնագրի պահանջների տեսանկյունից,

սպառողների շահերի պաշտպանության մակարդակի բարձրացմանը` միջազգային լավագույն փորձի ներդրման և արտադրանքի անվտանգության և սպառողների պաշտպանությանը լավագույնս ծառայելու համար:

Այսպիսով, որակի ենթակառուցվածքի բարեփոխման նպատակը տեխնիկական կանոնակարգերի, ստանդարտացման, չափազիտության, հավատարմագրման, փորձարկման, տեխնիկական հսկողության, սերտիֆիկացման և շուկայի վերահսկողության ազգային ընթացակարգերի արդիկանացումն է` ներքին և արտաքին բնույթի խնդիրներին լավագույնս ծառայելու համար:

Ընդհանուր առմամբ, գործող համակարգի վերաբերյալ 2010թ. ներկայացվեցվել են միջազգային փորձագետների զեկույցները, համաձայն որոնց ոլորտը կանոնակարգող ներկա օրենսդրական դաշտը հիմնականում չի համապատասխանում միջազգային լավագույն փորձին և հանգեցնում է անարդյունավետ ազգային որակի ենթակառուցվածքի և բացի դա, որակին առնչվող ծառայությունների, ինչպիսիք են` սերտիֆիկացումը, փորձարկումը և ստուգաճշտումը, թույլ շուկան` արտադրանքի որակի հետ կապված մարտահրավերներ է առաջադրում Հայաստանում:

ԵՄ-ի և Հայաստանի միջև ԽՀԱԱՀ-ի շուրջ բանակցությունների մեկնարկի տեսանկյունից խնդրահարույց է համարվում առևտրի տեխնիկական խոչընդոտների ոլորտը, որի բարեփոխումը ենթադրում է կանոնակարգերի, ստանդարտների և գործելակերպերի աստիճանական մոտարկում և այն անհրաժեշտ է սկսել նախ օրենսդրության մոտարկումից: Մոտարկման նպատակն է ապահովել ազգային որակի ենթակառուցվածքի զարգացման հեռանկարային ուղղվածություն և գոյություն ունեցող համակարգը բարեփոխել այնպես, որ այն համապատասխանի միջազգային և եվրոպական պահանջներին: ՀՀ օրենսդրությունը ԵՄ օրենսդրությանը չմոտարկված

լինելը խոչընդոտում է Հայաստանում արտադրվող արտադրանքի արտահանմանը և չի նպաստում սպառողների և պետության շահերի արդյունավետ պաշտպանությանը:

Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրումը՝ համապատասխանության հավաստման, չափումների միասնականության ապահովման և տեխնիկական անվտանգության ապահովման բնագավառներում չի իրականացվում մեկ համատարմագրման ընթացակարգով և մեկ հավատարմագրման մարմնի կողմից, որը հակասում է միջազգային և եվրոպական պահանջներին՝ ԻՍՕ/ԻԷԿ 17011 ստանդարտ և թիվ 765/2008 (ԵՀ) կանոնակարգ:

Հավատարմագրման մարմինը չի անդամակցում, որևէ միջազգային, եվրոպական հավատարմագրման կազմակերպությանը, ուստի, հավատարմագրման վկայագրերը չեն ճանաչվում արտերկրում:

Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրման ոլորտից դուրս են մնացել մի շարք բնագավառներ, մասնավորապես սննդամթերքի անվտանգության, աշխատանքի անվտանգության կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինների հավատարմագրումը և այլն:

Օրենքի նախագծով նախատեսվում է ստեղծել միջազգային և եվրոպական պահանջներին ներդաշնակ հավատարմագրման ազգային մարմին, որը կլինի համապատասխանության գնահատման մարմիններին հավատարմագրման ծառայություններ մատուցող Հայաստանի Հանրապետությունում միակ մարմինը, հավատարմագրման բնագավառում մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնումը: Օրենքի նախագծում ներառված են Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա համապատասխանության գնահատման մարմինների գործունեության իրականացման հնարավորության պայամանները, Հավատարմագրման ազգային մարմնի հավատարմագրման տարածաշրջանային և միջազգային կազմակերպություններին անդամակցության, հավատարմագրման վկայագրերի ու համապատասխանության գնահատման արդյունքների փոխձանաչման, օտարերկրյա հավատարմագրման մարմնի հետ համատեղ համապատասխանության գնահատման մարմինների գնահատման և հավատարմագրման իրականացման մասին դրույթները և այլն:

Հայաստանի Հանրապետության ստանդարտացման համակարգում հիմնական բարեփոխումներն իրականացվել են 1999 թ. «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի

ընդունամբ: 2004թ. օրենքում կատարվեցին փոփոխություններ, որոնք նպատակ էին հետապնդում համապատասխանեցնել օրենքը միջազգային չափանիշներին և ապահովել ՀՀ անդամկցությունը ԱՀԿ-ին: Համաձայն ներկայումս գործող ՀՀ օրենքի որոշակի խառնաշփոթ է առաջանում ստանդարտացման և տեխնիկական կանոնակարգման գործընթացների միջև: Նոր օրենքի նախագծով նախատեսվում է տարանջատել ստանդարտացման գործընթացը պարտադիր պահանջներ սահմանող տեխնիկական կանոնակարգերի սահմանման գործընթացից: Վերջինիս դրույթները նախատեսվում են առանձին օրենքով:

Ներկայումս ՀՀ կառավարության կողմից լիազորված ստանդարտացման ազգային մարմին է հանդիսանում ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը, մինչդեռ միջազգային և եվրոպական ստանդարտացման կազմակերպությունները որպես ստանդարտացման ազգային մարմին մշտապես ճանաչել և համագործակցել են Ստանդարտների ազգային ինստիտուտի հետ: Նոր օրենքի նախագծով ստանդարտացման մասնագիտական գործառույթները վերապահվում են Ստանդարտների ազգային ինստիտուտին, որին տրվում է նաև ստանդարտացման ազգային մարմնի կարգավիճակ: Նշվածը բխում է ընդունված ստանդարտացման աշխատանքների միջազգային գործելակերպից և փորձից: Միաժամանակ, ստանդարտացման բնագավառում պետական քաղաքականության սահմանման գործառույթը վերապահվում է պետական լիազորված մարմնին: Օրենքի նախագծով հստակեցվում են ստանդարտացման բնագավառի կառավարման մարմինների գործառույթները, ստանդարտացման սկզբունքները, ստանդարտների մշակման, ընդունման և կիրառման կարգը, ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի կազմը և բնույթը:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը.

ՀՀ կառավարության կողմից որդեգրված քաղաքականությունը ուղղված է նպատակին, որ Հայաստանը պետք է ապահովի արտադրանքի անվտանգությանը վերաբերող նոր օրենսդրության (ներդաշնակեցված ԵՄ ընդհանուր օրենսդրության ու միջազգային ստանդարտների հետ) արդյունավետ իրականացում և կիրարկում: Այն նախատեսում է որակի ամբողջ ենթակառուցվածքի բարեփոխումների իրականացում՝ համապատասխանեցնելով այն միջազգային օրենսդրությանը, ազգային տնտեսության նոր իրողություններին և համապատասխանեցնելով նաև մի շարք ոլորտներում առնչվող

բարեփոխումներին, ինչպես օրինակ՝ «Գործարար միջավայրի բարելավման» բարեփոխումն է:

4. Կարգավորման նպատակը և բնույթը.

«Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման նպատակը տեխնիկական կանոնակարգման ոլորտի բարեփոխումների իրականացումն է, ազգային տնտեսության նոր իրողություններին համապատասխանեցումը, ինչպես նաև ոլորտի կանոնակարգման օրեսդրական դաշտի ձևավորումը՝ համապատասխան ԵՄ օրենդրությանը և միջազգային պահանջների:

Օրենքով հստակեցվել են.

հասկացությունները՝ ԵՄ N768/2008 դիրեկտիվի, ինչպես նաև ԱՏԽ համաձայնագրի պահանջներին համապատասխան,

տեխնիկական կանոնակարգերի մշակման և ընդունման ընթացակարգերը, նախատեսվել է պահանջ գործող տեխնիկական կանոնակարգերի վերանայման անհրաժեշտության վերաբերյալ,

տեխնիկական կանոնակարգերի կառուցվածքին ներկայացվող պահանջներ,

Սահմանվել են.

տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման ընթացակարգերի բոլոր մասնակիցների պարտավորությունները,

տեխնիկական կանոնակարգերի գրանցամատյանի վարման պահանջ,

տեխնիկական կանոնակարգերի մշակման կամ դրանց մշակման կազմակերպման իրավասության վերաբերյալ դրույթներ,

որակի ազգային խորհրդի ստեղծման վերաբերյալ դրույթներ, ինչը կնպաստի ընդունվող տեխնիկական կանոնակարգերի թառանցիկությանն ու անկախությանը:

Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատման գործընթացի համար սահմանվել են գնահատման համար նշանակված մարմիններին և նրանց պարտականություններին, Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս իրականացված համապատասխանության գնահատման արդյունքների ձանաչմանը, համապատասխանության գնահատման նշանակված մարմնի բողոքարկմանը, համապատասխանության հայտարարագրին վերաբերող դրույթներ:

Հավատարմագրման ոլորտում անհրաժեշտ է.

1. զարգացնել Հայաստանի Հանրապետության հավատարմագրման ազգային համակարգը,

2. նպաստել Հայաստանի Հանրապետությունում համապատասխանության գնահատման մարմինների կարողությունների և ծառայությունների կատարելագործմանը, բարձրացնել սպառողների վստահությունը համապատասխանության գնահատման գործունեության արդյունքների նկատմամբ,

3. ապահովել համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրումը՝ միջազգային լավագույն փորձին և պահանջներին համաձայն:

Ստանդարտացման բնագավառում օրենսդրական կարգավորման նպատակն է՝ սահմանել Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման գործունեության իրավական հիմքերը եւ դրա մասնակիցների իրավասությունը, ինչպես նաև կանոնակարգել ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի մշակման և կիրառման սկզբունքները:

«Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքը առաջին անգամ տալիս է Հայաստանի Հանրապետությունում «չափածրարված արտադրանք» հասկացությունը:

Արտադրանքը համարվում է չափածրարված, երբ այն դրվում է փաթեթի մեջ առանց գնորդի ներկայության, և փաթեթում գտնվող արտադրանքի պարունակության քանակը ունի նախասահմանված արժեք (թե քանակ), որը հնարավոր չէ փոխել առանց փաթեթը բացելու կամ զգալի փոփոխություններ կատարելու:

Օրենքով կարգավորվում են չափածրարված արտադրանքի և չափիչ սրվակների մակնշման, չափագիտական նորմերի, պայմանանշանների խնդիրները, ինչպես նաև դրանց տրամադրման կարգը, ինչպես նաև չափածրարում իրականացնելու համար և չափածրարման հսկողության համար կիրառվող սարքավորումներին ներկայացվող չափագիտական պահանջները: Արգելվում է առանց պայմանանշանի չափածրարված արտադրանքի իրացումը և առանց համապատասխան պայմանանշանի՝ չափիչ սրվակների կիրառումը:

Այս խնդիրը համարվում է արդի չափագիտության հիմնարար խնդիրներից մեկը, որի լուծումը համարվում է ԵՄ պահանջ: Օրենքով կարգավորվում է նաև չափագիտական վերահսկողությունը որպես ստուգում դիտարկելու և կիրառելու հարցը: Վերջինս նվազեցում է կոռուպցիոն ռիսկերը:

Օրենքում հստակորեն ուրվագծված են չափազիտության բնագավառում պետության կողմից օրենսդրորեն կարգավորվող ոլորտները:

5.Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք.

Իրավական ակտի նախագծի մշակումն իրականացրել է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության “Չափազիտության ազգային ինստիտուտ” ՓԲԸ-ն և ՀՀ էկոնոմիկայի նախարարության “Ստանդարտների ազգային ինստիտուտ” ՓԲԸ-ն:

6.Ակնկալվող արդյունքը.

«Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման արդյունքում կապահովվի «Հայաստանի Հանրապետության եվ Եվրոպական միության միջև խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի բանակցությունների մեկնարկի նպատակով մինչև 2011 թվականի հունիս ամիսը կատարվելիք միջոցառումների ժամանակացույցի» 1-րդ կետով նախատեսված հանձնարարականի կատարումը, որով

կիրականացվի օրենսդրության և գործելակերպերի համապատասխանեցումը միջազգային ու եվրոպական պահանջներին և որակի ենթակառուցվածքի ծառայությունների միջազգային ճանաչումը: Այն ազդեցություն կունենա սպառողների պաշտպանության ոլորտի վրա այն առումով, որ Հայաստանում կգործեն համապատասխանության գնահատման միջազգային նորմերին համապատասխան ծառայություններ, պայմաններ կստեղծվեն ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում Հայաստանի արտադրողների մրցունակության բարձրացման համար, տեխնիկական կանոնակարգերը աստիճանաբար կմոտարկվեն ԵՄ-ի տեխնիկական կանոնակարգերին՝ բացառելով բյուրոկրատական քաշքշուկը:

«Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման արդյունքում եվրոպական և միջազգային հավատարմագրման համակարգերին մոտարկված Հայաստանի Հանրապետության հավատարմագրման համակարգի ձևավորման մեկնարկն է ու հավատարմագրման ազգային մարմնի ձևավորումը, որն էլ

իր հերթին կբարձրացնի Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրման բնագավառում մատուցվող ծառայությունների որակը և նախապայման կհանդիսանա Հավատարմագրման ազգային մարմնի կողմից հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների գործունեության արդյունքների ճանաչման համար:

Հավատարմագրման արդյունքների փոխձանաչման բազմակողմանի համաձայնագրերում հավատարմագրման մարմնի մասնակցությունը կվերացնի առևտրային խոչընդոտները՝ կնպաստի արտաքին առևտրի պայմանների դյուրինացմանը, արտահանման ծավալների մեծացմանը, բիզնեսի զարգացմանը, համապատասխանության գնահատման աշխատանքների իրականացման համար պահանջվող ժամանակի և ֆինանսական ռեսուրսների քանակի կրճատմանը, բարենպաստ պայմաններ կստեղծի տեղական արտադրողի համար, կապահովի ապրանքների ազատ տեղաշարժը, կբացառի նույն ապրանքի կրկնական փորձարկման և կրկնական սերտիֆիկացման անհրաժեշտությունը ու կնպաստի տնտեսության զարգացմանը:

7.Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են.)

Սույն «Տեխնիկական կանոնակարգման մասին», «Չափումների միասնականության ապահովման մասին», «Ստանդարտացման մասին» և «Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունումից հետո ուժը կորցրած կձանաչվեն գործող և ոլորտը կարագվորող բոլոր օրենքները՝ 1999 թվականի «Ստանդարտացման մասին» N18, 2004 թվականի «Չափումների միասնականության ապահովման մասին» N 83 և 2004 թվականի «Համապատասխանության գնահատման մասին» N82 ՀՀ օրենքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ»,
«ԶԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ»,
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ
ԸՆԴՈՒՄՆԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՈՒՄ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱԿԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՆՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔԸ ՈՉ
ԿԻՐԱՌԵԼԻ ԼԻՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Տեխնիկական կանոնակարգման մասին», «Զափումների միասնականության ապահովման մասին», «Ստանդարտացման մասին» և «Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին տեղեկանքի լրացման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ»,
«ԶԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ»,
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵԼԻՔ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների
անհրաժեշտությունը.

Չկա

: Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ
համապատասխանությունը.

Համապատասխանում է

: Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ»,
«ԶՈՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ»,
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆԸ ԵՎ
ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը.

Նախագիծը տեղադրված է ՀՀ էկոնոմիկայի նախարարության (www.mineconomy.am) պաշտոնական կայք էջում հանրային քննարկման նպատակով:

2. Հասարակության մասնակցությունը նախագծմանը և/կամ քննարկումներին.

Հասարակությունը ներգրավված չի եղել որոշման նախագծմանը և քննարկումներին:

3. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են).

Չկան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ